


# Տեղեկատու թիվ 09 (սեպտեմբեր 2025 թ.)
## Newsletter N 09

---

## Հայ դատի կենտրոնական գրասենյակ

### Յայտարարութիւն՝ յանուն Երուսաղէմի հայութեան եւ պատրիարքութեան հազարամեայ իրաւունքներու պաշտպանութեան

Հ.Յ.Դ. Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդը կ՚ողջունէ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Ընդհանուր Ժողովի 24 Սեպտեմբեր 2025-ի նիստի որոշումը, որ «Կովերու Պարտէզ (Հայոց Պարտէզ)»ի վարձակալութեան հարցով 2021 թուականին ստորագրուած պայմանագիրը կը հռչակէ «անօրինական, հակականոնական եւ անվաւեր» եւ կը մերժէ «հաշտարարի միջոցով ձեռք բերուածը Յաւելուածը (Addendum) եւ Կարգաւորման Համաձայնագիրը»: Միաբանութեան Ընդհանուր Ժողովը նաեւ որոշած է «հետապնդե[լ] չեղարկման դատական հայցն ընդդէմ ‘Զանա Կարտընս’ ընկերութեան»:
Իր այս որոշումներով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը կը վերահաստատէ իր յանձնառութիւնը եւ իրաւական պարտաւորութիւնը՝ Երուսաղէմի հայապատկան հողերը տնօրինելու յօգուտ հայ համայնքին:

Text Link

### Հայ դատի

## տարածաշրջանային գրասենյակների արձագանքը ԵԱՀԿ Մինսկի գործընթացի լուծարման կապակցությամբ

Հայ դատի Վաշինգտոնի, Բրյուսելի, Մոսկվայի, և Ֆրանսիայի գրասենյակները խստորեն դատապարտելով Հայաստանի հանդեպ ուժի և սպառնալիքի կիրառման քաղաքականության պայմաններում ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարման փաստը, միաժամանակ հանդես են գալիս արցախահայության հիմնարար իրավունքների պաշտպանության նպատակով միջազգային իրավասու մարմնի ստեղծման օգտին:
Հայ դատի գրասենյակները համոզում են հայտնել, որ նման քայլով միջազգային հանրությունն ըստ էության լեգիտիմացնում է ուժի կիրառման միջոցով հակամարտությունները «լուծելու» և էթնիկ զտումների քաղաքականությունը:
Ըստ հանձնախմբերի, Հայաստանի և Ադրբեջանի միջև իրական խաղաղությունը պետք է հիմնված լինի ոչ թե Հայաստանի կողմից ադրբեջանականան պահանջների կատարման և դրանց միջազգայնորեն ընդունման, այլ առաջնային հետևյալ հանգամանքների վրա.

- Ադրբեջանում պահվող հայ գերիների անհապաղ ազատ արձակում
- Հայկական մշակութային ժառանգության պաշտպանություն
- Հայաստանի անվտանգությունն ու ինքնիշխանության նկատմամբ ամբողջական հարգանք և օկուպացիոն զինված ուժերի դուրսբերում ՀՀ ինքնիշխան տարածքից
- Արցախից բռնի տեղահանված հայերի վերադարձի իրավունքի իրացում՝ համաձայն Արդարադատության միջազգային դատարանի 2023թ. նոյեմբերի 17-ի որոշման

Text Link

## Statement by ANC-International on the closure of OSCE Minsk process

Today, the OSCE Ministerial Council adopted a decision, through a silent procedure, to close the OSCE Minsk structures and their associated financial resources. This decision follows the joint appeal of the Armenian and Azerbaijani Foreign Ministers, dated 8 August 2025 and circulated on 11 August.
This “joint appeal” was not the product of free will. It was one of Azerbaijan’s preconditions for signing the so-called “Peace Agreement,” finalized in March 2025 and publicized on 11 August, but still unsigned due to Azerbaijan’s ever-expanding demands—including forcing Armenia to amend its Constitution. Armenia agreed to issue the “joint appeal” under the threat and use of force, making it an invalid instrument under international law.
The Armenian government’s policy of appeasing Azerbaijan—driven above all by the desire to cling to power—does not serve the interests of the Armenian state and nation and represents a serious blow to the right of self-determination of the people of Nagorno-Karabakh. In 2021, it came to office on the promise of a different path, presenting the National Assembly with a program that pledged the opposite of what it now enforces.
By endorsing the Azerbaijan-Armenia “joint appeal”, the OSCE is legitimizing the use

of force as a method of dispute settlement. This follows Azerbaijan's ethnic cleansing of Nagorno-Karabakh in September–October 2023, when 120,000 Armenians were expelled from their ancestral homeland through siege, blockade, and military assault on civilians. These acts, widely documented and corroborated, amount to crimes under international law.

Text Link

## Հայտարարություն ԵԱՀԿ Մինսկի գործընթացի լուծարման վերաբերյալ

Այսօր ԵԱՀԿ նախարարական խորհուրդը «լուռ ընթացակարգով» որոշում է ընդունել լուծարելու ԵԱՀԿ Մինսկի կառույցները և դադարեցնելու դրանց ֆինանսական միջոցները: Այս որոշումը հաջորդել է Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների 2025թ. օգոստոսի 8-ի համատեղ դիմումին, որը տարածվեց օգոստոսի 11-ին:
Այս «համատեղ դիմումը» ազատ կամքի արտահայտում չէր: Դա Ադրբեջանի կողմից պարտադրված նախապայմաններից մեկն էր՝ այսպես կոչված «Խաղաղության պայմանագիրը» ստորագրելու համար, որը վերջնական տեսքի էր բերվել 2025թ. մարտին և հրապարակվել օգոստոսի 11-ին, սակայն մինչ այժմ չի ստորագրվել Ադրբեջանի՝ մշտապես աճող պահանջների պատճառով, ներառյալ՝ Հայաստանին Սահմանադրությունը փոխելու հարկադրանքը:
Հայաստանը համաձայնել է այդ «համատեղ դիմումին» ուժի և դրա սպառնալիքի կիրառման պայմաններում, ինչի հետևանքով այն, միջազգային իրավունքի համաձայն, համարվում է անվավեր:
Հայաստանի կառավարության՝ Ադրբեջանին անընդհատ զիջելու քաղաքականությունը՝ պայմանավորված իշխանությունը պահպանելու ցանկությամբ, չի ծառայում հայոց պետության և ազգային շահերին և լուրջ հարված է հասցնում Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքին: 2021թ. իշխանության գալով՝ այս կառավարությունը խոստացել էր տարբեր ուղի, Ազգային ժողովին ներկայացնելով մի ծրագիր, որն այժմ իրականացվողի ճիշտ հակառակն էր:

Text Link

## Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

## ANCA Rallies Grassroots in Washington for Armenia and Artsakh



The Armenian National Committee of America (ANCA) Eastern and Western Regions mobilized a powerful nationwide grassroots coalition for September Advocacy Days, held from September 15 to 17 in Washington, DC, advancing an array of strategic policy priorities aligned with the survival of Artsakh and the security of Armenia.
Armenian Americans and allies from across the United States traveled to the nation's

capital to promote a focused legislative agenda rooted in accountability for Azerbaijan's war crimes, justice for Artsakh's Armenians, and the protection of Armenia's sovereignty.
The three-day initiative featured over one hundred Congressional meetings, with an intergenerational delegation of Armenian American advocates – including first-time participants, seasoned organizers, and alumni of ANCA's Rising Leaders, Leo Sarkisian and Maral Melkonian Avetisyan Fellowships, Kasparian Summer Academy and Hovig Apo Saghdejian Capital Gateway programs – urging lawmakers to support legislative efforts that address the ongoing consequences of Azerbaijan's genocidal ethnic cleansing of Artsakh in September 2023.

Text Link




## ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը կոչ է անում ազատ արձակել հայ գերիներին և ապահովել Արցախից տեղահանվածների վերադարձը

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովն այսօր ընդունել է Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի կողմից աջակցվող փոփոխությունը՝ «2026թ. պետդեպարտամենտի լիազորությունների մասին օրինագծում», որը պարտադրում է պետդեպարտամենտին ապահովել հայ ռազմագերիների ազատ արձակումը, պաշտպանել Արցախի հայկական կրոնական և մշակութային ժառանգությունը, աջակցել Արցախի տեղահանված հայերի վերադարձի իրավունքի իրացմանը: Պատասխանատվության ապահովման ուղղությամբ ևս մեկ կարևոր քայլ էր Թուրքիայի տարածաշրջանային ապակայունացնող գործողությունների վերաբերյալ համապարփակ զեկույցի պահանջը:
Մեկնաբանելով օրինագծին տրված դրական եզրակացությունը՝ Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի պատասխանատու Արամ Համբարյանը նկատել է. «Չնայած բոլոր այն կողմերին, որոնք փորձում են ջնջել Արցախը, լքել գերիներին և անտեսել մեր սրբավայրերը, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը՝ երկկուսակցական հիմքով, այսօր վճռական դիրք զբաղեցրեց արցախահայության վերադարձի, հայ գերիների ազատ արձակման և մեր քրիստոնեական սրբավայրերի պաշտպանության օգտին: Մենք շարունակելու ենք պայքարել ցեղասպանության և էթնիկ զտման լեգիտիմացման ցանկացած փորձի դեմ, քանի որ դա միայն խրախուսում է նոր ցեղասպանություններ և նոր էթնիկ զտումներ»:

Text Link

## House Foreign Affairs Committee Calls for Release of Armenian Prisoners, Return of Artsakh's Armenians




The House Foreign Affairs Committee today

adopted Armenian National Committee of America (ANCA) backed amendments to the Fiscal Year 2026 State Department Authorization Bill (H.R.5300), directing the State Department to secure the release of Armenian prisoners of war, safeguard Armenian religious and cultural heritage, and support the right of return for the forcibly displaced Armenians of Artsakh. In a further step forward for accountability, the Committee also passed an amendment calling for a comprehensive report on Turkey's regional destabilization.

"Despite all the stakeholders trying to erase Artsakh, forsake hostages, and abandon our holy sites, the U.S. House Foreign Affairs Committee – on a bipartisan basis – took a strong stand today for the return of Armenians to Artsakh, the release of Armenian hostages, and the protection of our Christian holy sites," said ANCA Executive Director Aram Hamparian. "We will continue to fight efforts to normalize genocide – to legitimize ethnic cleansing – because doing so only invites more genocide, further ethnic cleansing."

Text Link




## «Ադրբեջանի պատժամիջոցների վերանայման մասին» օրինագիծը ներկայացվել է ԱՄՆ Կոնգրեսում

Կոնգրեսականներ Դինա Տիտուսը և Գուս Բիլիրակիսը ներկայացրել են «Ադրբեջանի պատժամիջոցների վերանայման մասին» երկկուսակցական օրենսդրական նախաձեռնություն, որը պարտավորեցնում է Թրամփ-Վենսի վարչակազմին վերանայել «Գլոբալ Մագնիցկու» ակտով սահմանված պատժամիջոցների կիրառելիությունը՝ Ադրբեջանի այն պաշտոնյաների նկատմամբ, որոնք պատասխանատու են ռազմական հանցագործությունների, մարդու իրավունքների խախտումների և հայ ռազմագերիների ու քաղաքացիական պատանդների շարունակվող ապօրինի բանտարկության համար: Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը ողջունել է օրինագծի ներկայացումը և սկսում է համազգային աշխատանք՝ դրա համար երկկուսակցական լայն աջակցություն ապահովելու համար:

Text Link

## Titus and Bilirakis Lead Bipartisan Azerbaijan Sanctions Bill




Representatives Dina Titus (D-NV) and Gus Bilirakis (R-FL) introduced the Azerbaijan Sanctions Review Act of 2025 (H.R.5369), bipartisan legislation directing the Trump-Vance Administration to review the applicability of Global Magnitsky Human Rights Accountability Act sanctions against Azerbaijani officials responsible for war crimes, human rights abuses, and the ongoing illegal detention of Armenian prisoners of war and civilian captives. The Armenian National Committee of America (ANCA) welcomed the introduction of the measure and is mobilizing nationwide to secure broad bipartisan support for its passage.

The bill's findings cite Azerbaijan's record of atrocities, including its 2020 war, 2023 genocidal ethnic cleansing of Artsakh, and the ongoing unlawful imprisonment,

torture, and sham trials of Armenian captives, noting: “Azerbaijan’s continued detainment, torture, extrajudicial execution, and other serious human rights violations against prisoners of war and captured civilians calls into serious question their commitment to human rights and ability to negotiate an equitable, lasting peace settlement.”

Text Link

## Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը պաշտպանում է 2026 թ. NDAA-ի հայանպաստ փոփոխությունները

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը հանդես է եկել ԱՄՆ Կոնգրեսում քննարկվող 2026 թ. «Ազգային պաշտպանական իրավասությունների ակտի» մի շարք հայանպաստ օրենսդրական նախաձեռնությունների աջակցությամբ : Դրանք հետապնդում են.

- Հայաստանի անվտանգության ուժեղացում,
- Ադրբեջանի զորքերի դուրսբերում Հայաստանի տարածքից,
- Հայ գերիների ազատ արձակում,
- Արցախից բռնի տեղահանված հայերի վերադարձ,
- Հայկական մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանություն,
- Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան ռազմական օգնության դադարեցում,
- ԱՄՆ նախագահի՝ 907-րդ բանաձևի ամենամյա չեղարկման նախագահական իրավասության սահմանափակում,
- Զենքի մատակարարման սահմանափակումներ Թուրքիային:

Մեկնաբանելով ներկայացված նախաձեռնությունը՝ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Ադրբեջանը կշարունակի հայ գերիների ապօրինի պահպանումը, Հայաստանի տարածքների օկուպացիան և Արցախի քրիստոնեական ժառանգության ավերումը այնքան ժամանակ, քանի դեռ նրան պատասխանատվության չեն ենթարկում: Կոնգրեսը պետք է վճռական քայլ կատարի՝ դադարեցնելով ռազմական օգնությունը Ադրբեջանին և ամրապնդելով Հայաստանի անվտանգությունը»:

Text Link




## ANCA Backs FY2026 NDAA Amendments Strengthening Armenia, Returning Armenians to Artsakh, Holding Azerbaijan Accountable

The Armenian National Committee of America (ANCA) is supporting a series of pro-Armenian amendments to the Fiscal Year 2026 National Defense Authorization Act (NDAA), a far-ranging piece of national security legislation under consideration in both the House (H.R.3838) and Senate (S.2296).

The ANCA-backed provisions seek to block military aid to Azerbaijan, strengthen Armenia's security, secure the release of Armenian prisoners, return Armenians to Artsakh, and enforce restrictions on arms transfers to Turkey.

"Azerbaijan's ongoing abuse of illegally held Armenian hostages, military occupation of sovereign Armenian territory, and destruction of Artsakh's Christian heritage will continue until it is held to account – in Washington, DC and in capitals around the world," remarked ANCA Executive Director Aram Hamparian. "Congress must act decisively – by cutting off military aid to Azerbaijan, strengthening Armenia's security, and laying the groundwork for the safe and dignified return of Artsakh's forcibly displaced Armenian population."

Text Link

## ANCA Calls on U.S. Attorney to Designate Armenian Americans as Victims of Cuellar–Azerbaijan Bribery Scheme




In a September 3, 2025 letter to the U.S. Attorney for the Southern District of Texas, ANCA Executive Director Aram Hamparian underscored that Rep. Cuellar's alleged corruption deprived Armenian Americans of their constitutional right to petition their government and to participate in the democratic process free of foreign manipulation. The letter details how, according to the Department of Justice indictment, Cuellar conspired with foreign entities to obstruct Armenian American advocacy in Congress in exchange for nearly $600,000 in Azerbaijani bribes funneled through sham contracts. "Congressman Cuellar's actions harmed Armenian Americans by undermining the free exercise of our constitutional right 'peaceably to assemble, and to petition the Government for a redress of grievances,' covertly conspiring with a foreign entity to reduce the impact of our advocacy as American citizens on the U.S. legislative process," explained Hamparian in the letter. It emphasized that Cuellar's interventions — from blocking humanitarian aid for Artsakh to opposing U.S.-funded demining programs in the region — had tangible and devastating consequences for Armenian communities at home and abroad.

Text Link

## ANCA Condemns Dissolution of OSCE Minsk Group; Urges U.S. Leadership to Hold Azerbaijan Accountable

The Armenian National Committee of America (ANCA) sharply condemned the dissolution of the Organization for Security and Cooperation in Europe (OSCE) Minsk Group today, warning that the decision represents a setback to multilateral diplomatic engagement in ensuring a just, durable, and dignified peace in the South Caucasus region.

"The dissolution of the OSCE Minsk Group is not a step toward peace, but an Azerbaijan-imposed condition to advance a lopsided deal secured through coercion and the use of force. This dangerous precedent rewards Baku's genocidal ethnic cleansing of Artsakh, illegal imprisonment and torture of Armenian prisoners, and ongoing occupation of sovereign Armenian lands – undermining the very principles of

international law and diplomacy the Minsk process once embodied," stated ANCA Executive Director Aram Hamparian.

"U.S. leadership is more vital than ever to enforce Section 907 of the FREEDOM Support Act, apply Global Magnitsky sanctions, and rally international partners to build a lasting and durable South Caucasus peace based on accountability and justice – ensuring the protected return of Artsakh's indigenous Armenian population, the Azerbaijan's immediate release of Armenian prisoners, the protection of Armenian cultural heritage, and the security and sovereignty of Armenia," concluded Hamparian.

Text Link

## Հայ դատի Եվրոպայի գրասենյակ

## Statement by The European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) on the Dissolution of the OSCE's Minsk Group

The European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) strongly condemns the OSCE Ministerial Council's decision to formally dissolve the OSCE Minsk structure, depriving the ethnically cleansed Armenians of Nagorno-Karabakh from the only internationally mandated mediation format for the peaceful resolution of the Nagorno-Karabakh conflict and the protection of their rights.

The EAFJD shares the concerns expressed by the Armenian National Committee-International (ANC-I), stating that the decision to close the OSCE Minsk structures "legitimizes the use of force and abandons the foundational principles of international law." The EAFJD firmly believes that the "joint appeal" by Armenia and Azerbaijan, which served as the basis for the decision, represents a serious blow to the right of self-determination of the people of Nagorno-Karabakh, the right to return to their ancestral homeland, the protection of the cultural and religious heritage in Nagorno-Karabakh, and omits to factor in serious lingering issues such as the occupation of sovereign Armenian territory by Azerbaijan, the sham trials of Armenian hostages in Baku, genocidal war crimes against innocent Armenian population of Artsakh and the persistent Armenophobic and militant rhetoric employed by Azerbaijan against Armenia and the Armenian people.

Text Link

## Հայ դատի Ֆրանսիայի հանձնախումբ

## LA DISSOLUTION DU GROUPE DE MINSK DE L'OSCE :UN DANGEREUX PRÉCÉDENT QUI RÉCOMPENSE LA FORCE SUR LE DROIT

La dissolution du Groupe de Minsk de l'OSCE ne constitue pas un pas vers la paix, mais une condition imposée par l'Azerbaïdjan pour faire avancer un accord déséquilibré obtenu par la coercition. Ce dangereux précédent récompense le nettoyage ethnique de l'Artsakh par Bakou et sape les principes mêmes du droit international que le processus de Minsk incarnait.

Cette « demande conjointe » n'est pas le produit du libre arbitre de l'Arménie mais l'une des – nombreuses – conditions préalables de l'Azerbaïdjan pour signer l'« Accord de paix ».

L'Arménie a accepté d'émettre cette demande sous la menace et l'usage de la force, ce qui en fait un instrument invalide selon le droit international.

Pour rappel, en septembre-octobre 2023, l'Azerbaïdjan a organisé le nettoyage ethnique du Haut-Karabagh après un blocus de 10 mois. Ces crimes, largement documentés, ont forcé plus de 150 000 Arméniens à l'exil, sans résoudre la question des droits du peuple d'Artsakh.

Abandonner la médiation internationale envoie aujourd'hui un message dangereux : la puissance, non la loi, décide des litiges. Un tel précédent ne fait que perpétuer les cycles de violence et saper les fondements de la paix.

La paix authentique doit garantir :

Text Link

## Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ




### South Australian Parliament Adopts Motion Marking Artsakh Ethnic Cleansing, Calls for Pro-Armenian Measures

On 17 September 2025, identical motions were unanimously adopted by both the South Australia House of Assembly and Legislative Council, calling for Pro-Armenian measures, reported the Armenian National Committee of Australia (ANC-AU).

The motions, mark the fifth anniversary of the 2020 Artsakh war and the second anniversary of the ethnic cleansing of Artsakh, while also directly calling on Azerbaijan to: immediately release 23 Armenian hostages; withdraw from the internationally recognised borders of Armenia; end the deliberate destruction of Armenian Christian and cultural sites in Artsakh and; allow Armenians to return to their homes under international guarantees.

Mr Tom Koutsantonis MP, the Member for West Torrens, championed the motion in the South Australian House of Assembly, whilst the motion in the Legislative Council was championed by The Hon. Connie Bonaros.

Text Link

## Հայ դատի Մոսկվայի գրասենյակ

## ՀՅԴ Հայ դատի Մոսկվայի գրասենյակի հայտարարությունը ԵԱՀԿ Մինսկի գործընթացի լուծարման կապակցությամբ

Մոսկվայի Հայ Դատի գրասենյակը իր խորը մտահոգությունն է հայտնում և խստորեն դատապարտում է ԵԱՀԿ նախարարական խորհրդի կողմից ԵԱՀԿ Մինսկի կառույցի պաշտոնական լուծարման որոշումը՝ ընդունելով այն որպես միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կոպտագույն ոտնահարում: Այն անտեսում է Ադրբեջանի կողմից հայրենազրկման և ցեղասպանության ենթարկված հազարավոր հայերի հիմնարար իրավունքներն ու հնարավորություն է տալիս Բաքվին սպառնալիքի և ուժի կիրառման միջոցով շարունակել իր ցեղասպան քաղաքականությունը: ԵԱՀԿ Մինսկի գործընթացը ավելի քան երեք տասնամյակ հանդիսացել է միակ միջազգային միջնորդական ձևաչափը՝ երաշխավորելով տարածաշրջանային անվտանգությունն ու առաջ մղելով հակամարտության խաղաղ, արդար և կայուն կարգավորումը:

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info

Armenian Cause Foundation | Mkher Mkrtchyan 12/1 | Yerevan, 0010 AM

Unsubscribe | Update Profile | Constant Contact Data Notice

Try email marketing for free today!